բ) Ներտեքստային կառուցվածքային միավորների բնույթը

Դավրիժեցու պատմագրքի «Նախադրութիւն...»-ում ներկայացված կառուցվածքային շեշտադրումները վերաբերում են ընդհանուր հյուսվածքին: Հետագա շարադրանքում, «Գիրք պատմութեանց»-ի տարբեր հատվածներում Դավրիժեցին հընթացս այլ տեքստային-ծրագրային նշումներ էլ է անում, որոնք, սակայն, ցուցանում են բովանդակության մասնավոր կողմեր: Կայունորեն դրսևորվելով ու որոշ օրինաչափություններ արձանագրելով՝ այդ նշումները վերածվում են ներտեքստային կառուցվածքային միավորների: Այս երևույթը նույնպես բնորոշ է հայ պատմագրությանն ընդհանրապես:

Այդ կերպ՝ կայունորեն դրսևորվում են պատմության բովանդակությունը հընթացս ցուցանող ծրագրային նշումները, որոնք տևում են այնքան, քանի դեռ պատմիչը հնարավորություն ունի խոստում տալու: Այսինքն՝ դրանք կախված են տեքստային տարածությունից: Այդ կարգի նշումները խմբավորվել են իբրև ***ծրագիր-խոստում*** միավոր: Դրանց հաճախադեպությունը պատմության շարադրանքը նաև յուրատեսակ զրույցի է վերածում ընթերցողի